Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2008 թ.
դեկտեմբերի 17-ի N 1016 - Ա
որոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ

ՕՊԵՐԱՏԻՎ ՇՏԱԲԻ

Տ. Սարգսյան - ՀՀ վարչապետ
(օպերատիվ շտաբի պետ)

Ա. Գևորգյան - ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար

Դ. Սարգսյան - ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար

Ա. Մովսիսյան - ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար

Գ. Խաչատրյան - ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ

Ա. Ղարիբյան - ՀՀ վարչապետի խորհրդական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2008 թ.
դեկտեմբերի 17-ի N 1016 - Ա
որոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Դ. Սարգսյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար (աշխատանքային խմբի ղեկավար)
Վ. Արամյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Մ. Թումասյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Լ. Ռուխկյան	- ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Ս. Հարությունյան	- ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ
Խ. Ավալյան	- ՀՀ վարչապետի օգնական
Լ. Հունանյան	- ՀՀ կենտրոնական բանկի վիճակագրության վարչության ֆինանսական վերլուծաբան (համաձայնությամբ)
Ֆ. Նախշքարյան	- «Գոլոս Արմենիի» թերթի գլխավոր խմբագիր (համաձայնությամբ)
Կ. Կարապետյան	- Զարգացման հայկական գործակալության տեղեկատվական-վերլուծական բաժնի պետ (համաձայնությամբ)
Կ. Գրիգորյան	- Համաշխարհային բանկի փորձագետ (համաձայնությամբ)
Ա. Տեր- Մարտիրոսյան	- փորձագետ (համաձայնությամբ)
Ա. Գրիգորյան	- ՀՀ վարչապետի օգնական (աշխատանքային խմբի քարտուղար)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2008 թ.
դեկտեմբերի 17-ի N 1016 - Ա
որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

1. Սույն աշխատակարգով կանոնակարգվում են տնտեսության զարգացմանը նպաստող ներդրումային ծրագրերի (այսուհետ՝ ծրագրեր) արդյունավետության գնահատման աշխատանքային խմբի գործունեության՝ աշխատանքների կազմակերպման հիմնական սկզբունքները։

2. Աշխատանքային խումբը խորհրդակցական մարմին է։

3. Աշխատանքային խումբն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, այլ իրավական ակտերով ու սույն աշխատակարգով և նպատակ ունի իրականացնելու Հայաստանի Հանրապետության տնտեսության տարբեր ճյուղերում՝ արդյունաբերություն, բնապահպանություն, առևտուր և այլն, նորարարական (ինովացիոն) գործարար ծրագրերի հավաքագրում, գնահատում և դրա հիման վրա օպերատիվ շտաբին ներկայացնելու համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ։

4. Աշխատանքային խումբն իր գործունեությամբ հաշվետու է Հայաստանի Հանրապետության վարչապետին։

5. Աշխատանքային խումբը պարբերաբար հրավիրվող իր նիստերի ընթացքում, ըստ բնագավառների, քննության է առնում ծրագրերը և ընդունում եզրակացություններ ստորև նշված հարցերի վերաբերյալ՝

1) ծրագրերի ներդրման հնարավորությունը.

2) ծրագրերի ներդրման ազդեցության գնահատումը.

3) ծրագրերի ներդրման նպատակահարմարությունը։

6. Աշխատանքների արդյունավետության և բազմակողմանիության ապահովման նպատակով աշխատանքային խումբը կարող է քննության առնել միջազգային, տարածաշրջանային նմանատիպ ծրագրերի իրականացման փորձը։

7. Աշխատանքային խումբը կազմված է ղեկավարից և անդամներից, ովքեր աշխատանքային խմբի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով։

8. Աշխատանքային խումբն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են խմբի ղեկավարի կողմից, ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ։

9. Աշխատանքային խմբի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է խմբի անդամների կեսից ավելին։

10. Աշխատանքային խմբի նիստերը վարում է խմբի ղեկավարը կամ նրա հանձնարարությամբ՝ խմբի անդամներից մեկը։

11. Աշխատանքային խմբի նիստի օրակարգը կազմվում և համապատասխան փաստաթղթերի հետ միասին տրամադրվում է խմբի անդամներին՝ գումարվող նիստից առնվազն 7 օր առաջ։

12. Աշխատանքային խմբի նիստերն սկսվում են նիստի օրակարգի հաստատմամբ և նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքի մասին զեկուցմամբ։

13. Աշխատանքային խմբի արձանագրություններն ստորագրում են խմբի բոլոր անդամները, իսկ եզրակացություններն ստորագրում է խմբի ղեկավարը։

14. Աշխատանքային խմբի նիստերին կարող են հրավիրվել պետական մարմինների, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները։

15. Աշխատանքային խումբն առանձին ծրագրերի քննարկմանը կարող է ներգրավել փորձագետների կամ մասնագետների կամ նախագիծը ներկայացնել փորձաքննության։

16. Աշխատանքային խմբի աշխատանքների կազմակերպչական և նյութատեխնիկական ապահովումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը։

17. Աշխատանքային խմբի ղեկավարը՝

1) կազմակերպում է խմբի գործունեությունը.

2) նշանակում է խմբի նիստի անցկացման օրը, ժամը, վայրը և հաստատում օրակարգը.

3) հրավիրում և վարում է նիստերը.

4) ներկայացնում է աշխատանքային խումբն այլ մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում։

18. Աշխատանքային խմբի անդամները՝

1) իրավունք ունեն՝

ա. աշխատանքային խմբի քննարկմանը ներկայացնելու հարցեր,

բ. ներկայացնելու առաջարկություններ խմբի գործունեության, ինչպես նաև նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ,

գ. ներկայացնելու աշխատանքային խմբի որոշումների վերաբերյալ գրավոր հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը և համարվում դրա անբաժանելի մասը։ Դրա մասին արձանագրության մեջ կատարվում է գրառում.

2) պարտավոր են՝

ա. մասնակցել խմբի աշխատանքներին,

բ. կատարել աշխատանքային խմբի որոշումները և նրա ղեկավարի հանձնարարականները։

19. Աշխատանքային խմբի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ։ Ձայների հավասարության դեպքում խմբի ղեկավարի ձայնը վճռորոշ է։

20. Աշխատանքային խմբի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 4
ՀՀ վարչապետի 2008 թ.
դեկտեմբերի 17 -ի N 1016 - Ա
որոշման

Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. Սույն ընթացակարգով կարգավորվում է տնտեսության զարգացմանը նպաստող ներդրումային ծրագրերի (այսուհետ՝ ծրագրեր) հավաքագրման (ծրագրերի ընդունման մասին հայտարարություն, հայտերը ներկայացնելը և դրանք ընդունելը, ժամկետներ) և գնահատման (անհրաժեշտ չափանիշներին համապատասխանություն) գործընթացը։

2. Տնտեսության զարգացմանը նպաստող ներդրումային ծրագրերի հավաքագրման նպատակը լավագույն ինովացիոն և գործարար ծրագրերի հայտնաբերումն ու պետության կողմից աջակցության ցուցաբերումն է, ինչը հաշվի առնելով, ներկայացված ծրագրերի գնահատման ժամանակ առավելությունը կտրվի այն ծրագրերին, որոնք առավելագույնս կբավարարեն հետևյալ չափանիշները՝

1) առաջարկվող ծրագրի առավել մանրամասն ուսումնասիրվածություն.

2) առաջարկվող ծրագրերի նվազագույն ռիսկայնություն.

3) պետական աջակցությանը զուգահեռ սեփականատերերի կողմից ծրագրի համաֆինանսավորման առկայություն.

4) առաջարկվող ծրագրի իրատեսականությունն ու կատարվելիք ներդրումների արդարացվածությունը։

3. Տնտեսության զարգացմանը նպաստող ներդրումային ծրագրերի գնահատման աշխատանքային խումբը ծրագրերի հավաքագրման վերջնաժամկետից առնվազն երկու ամիս առաջ զանգվածային լրատվության միջոցներով հրապարակում է ծրագրերի

հավաքագրման մասին ծանուցումը (հրավերը), որը պետք է պարունակի տեղեկություններ ծրագրերին (այսուհետ՝ հայտ) ներկայացվող պահանջների, հայտերը ներկայացնելու կարգի և ժամկետների, հայտերի բացման օրվա, հայտերի գնահատման կարգի ու էական պայմանների մասին տեղեկատվություն, ինչպես նաև լրացուցիչ տեղեկատվություն ստանալու պայմանները, էլեկտրոնային կայքի հասցեն, որտեղ տեղադրված է հրավերը, աշխատանքային խմբի որոշմամբ՝ այլ տեղեկություններ։

4. Հրավերի պայմաններում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում աշխատանքային խումբը կատարում է համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ, որոնք հրապարակվում են նույն կերպ, ինչպես սույն ընթացակարգի 3-րդ կետում նշված հրավերը։

5. Թույլատրվում է հրավերում կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում հրավերի մասին հայտարարության մեջ նշված էական պայմանները։

6. Հայտը ներկայացնելու ժամկետ է համարվում այն Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ մուտքագրվելու օրը, որի մասին գրառում է կատարվում հայտի ծրարի վրա։ Հայտատուի պահանջով նրան տրվում է ստացական։

7. Հայտերը բացվում են հրավերով սահմանված օրը և ժամին՝ այդ նպատակով հրավիրված նիստում։

8. Հայտերը, որոնք չեն համապատասխանում սահմանված պահանջներին, աշխատանքային խմբի կողմից չեն քննարկվում, և դրա մասին գրավոր տեղեկացվում է հայտատուներին՝ նշելով պատճառները։

9. Աշխատանքային խումբը ներկայացված առաջարկների վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով կարող է դիմել հայտատուներին։

10. Ներկայացված հայտերը քննարկում և գնահատում է աշխատանքային խումբը՝ հայտերը բացելու օրվանից մեկամսյա ժամկետում՝ սույն ընթացակարգի 14-րդ կետով սահմանված չափանիշներին համապատասխան։

11. Աշխատանքային խմբի անդամների տված գնահատման արդյունքների հիման վրա աշխատանքային խումբն ընդունում է որոշում հրավերի մասնակիցների կողմից ներկայացված առաջարկների գնահատման արդյունքների մասին։

12. Մասնակցության համար միայն մեկ հայտ ներկայացնելը հիմք չէ հավաքագրումը չկայացած համարելու համար։

13. Մասնակիցների մասին հայտնի դարձած տեղեկությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ենթակա չեն հրապարակման՝ առանց մասնակիցների համաձայնության։

14.

NN ը/կ	Գնահատման չափանիշները	Առավելագույն միավորը	Գնահատա-կանը	Մեկնաբա-նությունը
1.	Նախագծի հեռանկարայնությունը՝ 1) արտադրության գիտա-տարություն, տնտեսության ռազմավարական բնագավառ-ների ամրապնդում, ինովացիոն բնույթի և նշանակության ավելացում. 2) մուլտիպլիկացիայի էֆեկտի աստիճան. 3) արտահանման ավելացում և (կամ) ներմուծման փոխա-րինում. 4) աշխատատեղերի ավելա-ցում և մարզերի զարգացում. 5) ներքին կոոպերացիայի աստիճան և տեղական հումքի վրա հիմնված լինելը	50		
2.	Նախագծի ռիսկի աստճանը	5		
3.	Համաֆինանսավորման առկայությունը	10		
4.	Ֆինանսական ցուցանիշների և նախագծային կանխատե-սումների շահավետությունը	5		
5.	Նախագծի ամբողջականության աստիճանը՝ 1) նախագծի տեխնիկական պատրաստվածության աստի-ճանը. 2) շուկայի մարքեթինգային վերլուծության և մրցակիցների առկայությունը. 3) տեխնոլոգիաների կամ	20		

	արտադրանքի կամ ծառայության շուկա ներթափանցելու մարքե-թինգային ծրագրի առկայությունը			
6.	Նախագծի իրականացման հա-մար որակյալ թիմի (աշխատա-կազմի) առկայություն՝ ներառյալ փորձառու ղեկավարը	10		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 5
ՀՀ վարչապետի 2008 թ.
դեկտեմբերի 17-ի N 1016 - Ա
որոշման

Պ Ա Հ Ա Ն Ջ Ն Ե Ր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ

1. Սույնով սահմանվում են տնտեսության զարգացմանը նպաստող ներդրումային ծրագրերի հավաքագրմանը մասնակցելու համար հայտերին ներկայացվող պահանջները։

2. Պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով քննարկման են ենթակա գիտատեխնիկական փորձարկումների, հայտնագործությունների, օգտակար մոդելների կամ գիտական հետազոտությունների արդյունքների՝ տնտեսության որևէ բնագավառում գործնական կիրառությանն ուղղված ինովացիոն ծրագրերը, ինչպես նաև տնտեսության որևէ բնագավառում փաստացի գործող բիզնեսի զարգացմանը միտված գործարար ծրագրերը։

3. Հայտը՝ սույն պահանջների 2-րդ կետում նշված ծրագրերից որևէ մեկն իրագործելու հարցում պետական աջակցություն ստանալու ակնկալիքով ներկայացված փաթեթն է, որը պետք է պարունակի՝

1) դիմում՝ հասցեագրված աշխատանքային խմբին, որում նշված են կից ներկայացվող փաստաթղթերի անվանումները և էջերի թիվը.

2) տեղեկություններ ծրագիրը մշակողի (մշակողների) մասին (անունը, հասցեն, հեռախոսահամարը, կապի այլ միջոցներ, իրավաբանական անձի դեպքում՝ գտնվելու վայրը, պետական գրանցման վերաբերյալ տեղեկություններ), ծրագրի էությունը, ծրագրի իրագործման արդյունքում ակնկալվող արդյունքը (արտահայտված նաև թվային տվյալներով).

3) ծրագրի համառոտ բնութագիրը և նկարագիրը.

ա. տեխնոլոգիաների կամ ծրագրերի համառոտ նկարագիրը,

բ. տեխնոլոգիաների կամ ծրագրերի կիրառման ոլորտները,

գ. հանդիսանում են արդյոք տեխնոլոգիաները կամ ծրագրերն աննախադեպ, ավանդական կամ առաջատար,

դ. հնարավոր է արդյոք տեխնոլոգիաների կամ ծրագրերի հետագա կատարելագործում,

ե. եթե կա տեխնոլոգիաների կամ ծրագրերի հետագա կատարելագործման անհրաժեշտություն, ապա արդյոք առկա են անհրաժեշտ ռեսուրսներ,

զ. տեխնոլոգիաների կամ ծրագրերի կիրառման ուղղությունները՝ նեղ մասնագիտական, մի քանի բնագավառներ կամ ավելի լայն,

է. հեշտ են արդյոք համատեղվում և համադրվում տվյալ տեխնոլոգիաները կամ ծրագրերն այլ տեխնոլոգիաների կամ ծրագրերի հետ,

ը. անվտանգ են արդյոք տեխնոլոգիաները կամ ծրագրերը շրջակա միջավայրի համար.

4) ծրագրի զարգացման փուլը՝

ա. ինչպիսի վիճակում կամ փուլում է գտնվում առաջարկվող տեխնոլոգիաների կամ ծրագրերի նախագծումը կամ իրագործումը,

բ. ներդրված է արդյոք արտադրությունը կամ ծառայությունների մատուցումը, թե անհրաժեշտ է ստեղծել նախաձեռնության իրագործման ընթացքում և ներկայումս թողարկվում են ցուցադրական նմուշներ,

գ. եթե առկա է արտադրություն, բավարար է արդյոք դրա հզորությունը նախաձեռնության իրագործման համար, թե անհրաժեշտ է հզորություններն ավելացնել, նշվում է նաև ավելացման չափը,

դ. եթե արտադրությունը ներդրված չէ, ապա որտեղ և ինչպես է նախատեսվում դա անել, կան արդոք դրա համար անհրաժեշտ ռեսուրսներ։ Նշել պահանջվող ռեսուրսները,

ե. անհրաժեշտ են արդյոք գործընկերներ կամ ներդրողներ՝ արտադրության գործարկման համար։ ինչպիսի օգնություն է ակնկալվում գործընկերներից,

զ. հնարավոր է արդյոք արտադրության ծավալների ավելացման արդյունքում որակի անկում և ինչպես է նախատեսվում լուծել որակի անկման հետ կապված խնդիրները,

է. առկա է արդոք արտադրանքի որակի նկատմամբ հսկողության համակարգ,

զ. առկա է արդյոք արտադրանքի որակի կառավարման համակարգ, եթե ոչ, ապա նախատեսվում է արդյոք ստեղծել,

ը. որակի ապահովման ինչպիսի համակարգ է առաջարկվում ներդնել (GLP, GMP, ISO 9000, ISO 45001 և այլն),

թ. կանոնակարգված են արդյոք հարաբերությունները բաղկացուցիչ մասերի և հումքի մատակարարների հետ, ինչպիսի համաձայնագրեր են կնքված,

ժ. առանձին բաղկացուցիչ մասերի քանի մատակարարներ կան և ինչ համաձայնագրեր կան նրանց հետ կնքված,

ժա. ներկայացնել մատակարարվող հումքի և բաղկացուցիչ մասերի որակը,

ժբ. հնարավոր է արդյոք գտնել առավել ձեռնտու մատակարարների։ Ինչ է դրա համար անհրաժեշտ,

5) աշխատանքների սկզբունքը և սարքերի կազմը.

6) համեմատական առավելություններն ու նորարարությունը.

7) կիրառելիությունը շուկայում և շուկայավարման ռազմավարությունը՝

ա. տեխնիկական տեսանկյունից ներկայացնել մրցակից տեխնոլոգիաները կամ ծրագրերը։ Ինչպիսի առավելություններ և տարբերություններ կան դրանց միջև,

բ. շուկա ներթափանցելու տեսանկյունից նկարագրել տեխնոլոգիաները կամ ծրագրերը, ինչպիսի առավելություններ ունեն դրանք մրցակիցների նկատմամբ (գին, որակ, մատակարարման պայմաններ, գովազդ և այլն),

գ. ինչպիսին է շուկայի ընդհանուր ծավալը (դրամային միավորներով, արտադրանքի միավորներով),

դ. ինչպիսին է արտադրանքի գոյություն ունեցող կամ նախատեսվող բաժինը շուկայում,

ե. ինչպիսի փուլում են գտնվում տեխնոլոգիաները կամ ծրագրերը՝ շուկայում դեռ նոր է հայտնվել կամ ունի կայուն և մշտական պահանջարկ, կամ տեխնոլոգիաները կամ ծրագրերը կարող են առաջիկա 2-3 տարիների ընթացքում փոխարինվել նորով,

զ. տեղակայվածության տեսանկյունից բնութագրել արտադրանքի շուկան՝ տարածաշրջանային, ազգային, համաշխարհային,

է. ներկայացնել հիմնական մրցակիցներին, ինչպիսին է նրանց բաժինը տեխնոլոգիաների կամ արտադրանքի շուկայում,

ը. ինչպիսին է առևտրային նախաձեռնության մարքետինգային ռազմավարությունը, շուկա մտնելու ինչպիսի ձևեր են նախատեսվում իրականացնել,

թ. ինչպիսին է մրցակիցների շուկայական քաղաքականությունը (եթե դա հայտնի է),

ժ. որոշված են արդյոք տեխնոլոգիաների կամ արտադրանքի սպառողները, նրանց ընդհանուր քանակը, բաժինը վաճառքի ընդհանուր ծավալներում,

ժա. ովքեր են սպառողները և որտեղ են գտնվում (Հայաստանի Հանրապետությունում, արտասահմանում),

ժբ. գոյություն ունեն արդյոք համաձայնագրեր կամ ցանկությունների մասին գրագրություն Ձեր և սպառողների միջև, նշել կոնկրետ ում հետ և նախատեսվող սպառման ծավալները,

ժգ. ինչպես է նախատեսվում ավելացնել սպառողների թիվը,

ժդ. տեխնոլոգիաների կամ արտադրանքի տարածման ինչպիսի ուղիներ կան, եթե չկան, ապա ինչպես է նախատեսվում դրանք ստեղծել,

ժե. նախատեսվում է արդյոք տեխնոլոգիաների կամ արտադրանքի գովազդ,

ժզ. գոյություն ունեն արդյոք կոնկրետ պատվիրատուի համար ստեղծված տեխնոլոգիաների կամ արտադրանքի կատարելագործված տարբերակներ,

ժէ. կա արդյոք հնարավորություն տեխնոլոգիաները կամ արտադրանքը համապատասխանեցնելու կոնկրետ սպառողի պահանջներին,

ժը. գոյություն ունի արդյոք տեխնոլոգիաների կամ արտադրանքի որակի ապահովման երաշխիքային և սպասարկման համակարգ.

8) մտավոր սեփականության իրավունքները՝

ա. ենթադրվում է արդյոք նոր մտավոր սեփականության ստեղծում տվյալ նախաձեռնության շրջանակներում,

բ. ով է հանդիսանում առևտրային նախաձեռնության հիմքում ընկած մտավոր սեփականության սեփականատերը,

գ. ինպես է պաշտպանված մտավոր սեփականությունը (հեղինակային իրավունքի վկայագիր, պատենտ, copyright, know-how և այլն),

դ. հիմնված են արդյոք տեխնոլոգիաները, արտադրանքը, ծառայությունները ընկերության հիմնադիրներին կամ ընկերությանը պատկանող պատենտների վրա,

ե. պատենտավորման ինչպիսի փուլեր են արդեն անցկացված,

զ. ինչն է հանդիսանում մտավոր սեփականության չթույլատրված օգտագործման կանխարգելման երաշխիք,

է. ծանրաբեռնված է արդյոք անձը չհրապարակման կամ այլ համաձայնագրերով, որոնք կարող են խոչընդոտել նախագծի իրագործմանը,

ը. եթե պատենտը պատկանում է Ձեր կամ այլ ընկերությանը (կամ ֆիզիկական անձանց), ապա գոյություն ունեն արդյոք իրավունքների ձեռքբերման մեխանիզմներ. նկարագրել դրանք,

թ. հնարավոր են արդյոք Ձեր և այլ ընկերությունների միջև մտավոր սեփականության հետ կապված վեճեր և ինչպիսին են այդ վեճերի լուծման մեթոդները,

ժ. ինչպիսի համաձայնագրեր են կնքված մտավոր սեփականատերերի հետ (լիցենզային պայմանագիր) և ինչ ծավալներով են կատարվում այդ համաձայնագրերը,

ժա. որոշված են արդյոք մտավոր սեփականության ոլորտում գործընկերները, ովքեր են նրանք, ինչպիսի կայացված համաձայնություններ կան նրանց հետ,

ժբ. ինչպիսի և ում կողմից տրված թույլտվություններ, լիցենզիաներ կամ սերտիֆիկատներ են հարկավոր ձեր նախաձեռնության իրագործման համար, տիրապետում եք արդյոք թույլտվությունների, լիցենզիաների կամ սերտիֆիկատների։

9) լրացուցիչ տեղեկատվություն.

10) ծրագրի արժեքը։

4. Եթե գիտատեխնիկական փորձարկումների, հայտնագործությունների, օգտակար մոդելների կամ գիտական հետազոտությունների արդյունքների օգտագործմամբ իրականացվելիք ծրագրերը նախատեսվում է իրագործել այլ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ արտադրական կարողությունների օգտագործմամբ, ապա գործարար ծրագրում առանձին բաժնով պետք է հստակ ներկայացված լինեն կողմերի (ծրագիրը մշակողի և արտադրական կարողությունների սեփականատիրոջ) իրավունքները, պարտականությունները, պատասխանատվության շրջանակները, իսկ ծրագիրը պետք է համաձայնեցված լինի իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հետ։

5. Սույն պահանջների 3-րդ կետի 3-10-րդ ենթակետերում նշված տեղեկատվությունը ներկայացվում է հետևյալ ձևաչափով՝

Ամփոփ բնութագիր և նկարագիր

Զարգացման փուլը

Աշխատանքի սկզբունքը և սարքերի կազմը

Համեմատական առավելություններն ու նորարարությունը

Կիրառելիությունը շուկայում և շուկայավարման ռազմավարությունը

Մտավոր սեփականության իրավունքներ

Լրացուցիչ տեղեկատվություն

Ծրագրի արժեքը

6. Հայտին, այն մշակողի հայեցողությամբ, կարող են կցվել նաև այլ փաստաթղթեր։

7. Հայտ ներկայացնելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետությունում գրանցված առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և ֆիզիկական անձինք։

8. Սույն պահանջների 3-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացվում են հայերեն, փակ ծրարով և պետք է ստորագրված լինեն դիմողի (լիազորված անձի) կողմից։

9. Հավաքագրման հրավերի մեջ նշված հայտերի ընդունման ժամկետում ներկայացվում է սոսնձված և ստորագրված փակ ծրարով՝ անձամբ կամ փոստով՝ պատվիրված նամակով։

10. Փոստով ուղարկված հայտերի՝ վերջնական ժամկետից ուշ կամ բացված տեսքով կամ այլ կերպ վնասված ստանալու ռիսկը կրում է հայտատուն։

11. Հայտի ծրարի վրա կատարվում են հետևյալ գրառումները՝

1) «ՀՀ կառավարության աշխատակազմ, քաղ. Երևան, Կառավարական տուն 1» բառերը.

2) «Տնտեսության զարգացմանը նպաստող ներդրումային ծրագրերի հավաքագրմանը մասնակցելու համար» բառերը.

3) «ՉԲԱՑԵԼ ՄԻՆՉԵՎ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԸ» բառերը.

4) մասնակցի անվանումը, գտնվելու վայրը և հեռախոսահամարը, իսկ ֆիզիկական անձի դեպքում անունը, ազգանունը, բնակության վայրը։

12. Հայտատուները մինչև հայտերը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտը կարող են փոփոխել կամ հետ վերցնել դրանք։ Հայտի փոփոխությունը կատարվում է հրավերով՝ հայտ ներկայացնելու համար նախատեսված կարգով՝ համապատասխան ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը։ Հավաքագրմանը մասնակցելուց հրաժարվելու դեպքում դրա մասին ծանուցումը կարող է ուղարկվել նամակով։

13. Հայտը մշակելիս պետք է հաշվի առնել, որ հավանության արժանացած ծրագրերին աջակցելու նպատակով կարող է ցուցաբերվել պետական աջակցության հետևյալ ձևերից որևէ մեկը՝

1) դրամաշնորհների տրամադրում.

2) երկարաժամկետ փոխառությունների տրամադրում.

3) պետության կողմից (որպես բաժնետեր) ներդրումների իրականացում.

4) վարկերի տոկոսների սուբսիդավորում.

5) ցածր տոկոսադրույքով վարկերի տրամադրում։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ